րի վաղահաս մահն է, դժբախտաբար, պատճառ եղել, որ նա չէ կարողացել ինձ ուղարկել իր հետաքրքրական տեղեկութեանց շարունակութիւնը»:

Ցայտնի է, որ Աբովեան Հաքսահաուզէնին եւս տրամադրել էր իր՝ տակաւին Դորպատում գրի առած «Պատանեկան յուշերը» գերմաներէն լեզուով, որոնցից եւ այնչափ առատօրէն օգտուել է գերման գիտնականը: Աբովեան նրան հաղորդած է եղել նաեւ մի շարք նիւթեր ժողովրդական բանահիւսութիւնից («Ալի եւ Գեարամ» եւայլն): Նոյնպիսի ծառայութիւններ մատուցել է Աբովեան, տեսնում ենք, Բոդենշտէդտին եւս:

Նկատի ունենալով Բոդենշտէդտի, որպէս ժամանակակցի, տեղեկութիւնների շահեկանութիւնը Աբովեանի կենսագրութեան համար, այստեղ ամբողջովին առաջ կը բերենք այն ամբողջ հատուածը, որ գերման բանաստեղծ-համբորդը նուիրել է Աբովեանին, եւ որը կրում է Աբովեան վերնագիրը («Հազար ու մի օր Արեւելքում», Բ. գիրք, 4-րդ գլուխ, էջ 159-167):

Ահա այդ հատուածը.—

«Հայաստանից վերադառնալուցս յետոյ ես մէկից աւելի անգամներ գրեցի Աբովեանին ու յիշեցրի նրան իր խոստումը՝ ուղարկել ինձ քիւրդ-ժողովրդական երգերի եւ Գեչիչ Օղլիի թաթարերէն լեզուով գրուած ոտանաւորների շարունակութիւնը: Նա գիտէ՛ր, որ ես մտադրութիւն ունիմ դրանց գերմաներէն թարգմանութիւնը հրատարակելու, ինչպէս եւ դրանից ստացուելիք նիւթական օգուտները իրե՛ն տրամադրելու, որ նա այդ ձեւով կարող լինի բարելաւել իր նեղ վիճակը: Այդ պատճառով էլ անհասկանալի էր ինձ, որ իմ բոլոր նամակները մնում էին անպատասխան, մինչեւ որ ես սրանից քիչ առաջ4) պատահմամբ վերահասու եղայ դրա տխուր պատճառին: Իմ հին ծանօթը եւ ուկրայնական լեզուի ուսուցիչս, պետական խորհրդական Ռոսկոլշենկոն Թիֆլիսից, որն այս ամառ Բերլինում ինձ այցելեց բուժավայր կատարած իր ճամբորդութեան միջոցին, հաղորդեց ինձ, թէ Աբովեանը արդէն երկու տարուց ի վեր անյայտացած է եւ թէ՝ անկարելի է եղել, հակառակ բոլոր որոնումներին, գտնել նրա հետքը: Ռոսկոլշենկոին, Աբովեանի նախկին մեծաւորին, թելադրած են եղել՝ նրան (Ա.-ին) Թիֆլիս տեղափոխելու, այդտեղ մի աւելի լաւ պաշտօն յանձնելու նպատակով: Թիֆլիսի Գիմնազիոնի օգնական-ուսուցիչներից մէկն էլ, վրացի, Թուրքիստանով, ուղարկուած է եղել Երեւան, Աբովեանին առժամապէս փոխարինելու համար: Երեւան հասնելուն պէս իմանում է նա, որ Աբովեանը, բոլորովին հակառակ իր սովորութեան, այդ օրը առաւօտը վաղ դուրս է եկել տնից եւ դեռ չի վերադարձել: Թուրքիստանովը միւս օրը կրկին գտնում է Աբովեանենց տուն, եւ տեսնում Աբովեանի կնոջը արտասուակոծ վիճակում: Վերջինս պատմում է, որ ամբողջ գիշերը իր ամուսնուն որոնելով է անցկացրել, բայց որ՝ ոչ ոք տեղեակ չէ դուրս եկել նրա մասին, ոչ ոք նրան տեսած չէ եղել: Այն օրից ահա անյայտացել է Աբովեան, եւ այնուհետեւ ոչ ոք նրա մասին մի բան չէ լսել:

«Հաւանօրէն նա ինքնասպանութիւն է արել, որովհետեւ դեռ այն միջոցին, երբ ես ծանօթացայ Աբովեանի հետ, նա գտնուում էր վերին աստիճանի մռայլ եւ անյոյս տրամադրութեան տակ, որ էլ աւելի ծանրացաւ նրա եւ Դորպատի պրոֆեսոր Աբիխի — որի առաջնորդն էր նշանակուել Աբովեան նրա՝ Արարատ սարը բարձրանալիս — միջեւ պատահած դէպքերի պատճառով: Աբիխի դոռոզ վերաբերմունքը Աբովեանի հանդէպ, որ ցուցադրելու իրաւունք էր համարել նա նրա համար, որ ռուսական պաշտօնէութեան սանդուխի վրայ մի-երկու աստիճանով բարձր է եղել Աբովեանից, առիթ էր տուել թիւրիմացութեանց: Վերջիններիս հետեւանքն էլ եղել է այն, որ խեղճ հայը յուսահատութեան ծայրն է հասել: Աբովեանը յետոյ ուղարկել էր ինձ իր օրագիրները (օրուան յուշերը) այն ժամանակից եւ խնդրել, որ ես հրատարակեմ, «Յաւելումներ եւ լուսաբանութիւններ պրոֆեսոր Աբիխի՝ Արարատ սարը բարձրանալու մասին» վերնագրով:

«Բոլորովին բարեացակամ մտքով ես չկատարեցի՛ այդ խնդիրը. նախ որ, իմ կարծի-

4) Գրքի (Բ. հատոր) յառաջաբանը թուագրուած է՝ 1850 թ. նոյեմբ. 15, Բերլին: Ա. հատորի յառաջաբանը թուագրութիւն չունի: